



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Թիւ 11057
Փետրուար 5, 1964

Արժանաշնորհ
Տ. Սարգիս Ահնյ. Գաշըզեան
Հոգեւոր Հովիւ Ս. ամբարձում Եկեղեցւոյ
եւ Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի
Պրիւսիտը:

Սիրելի Տէր Սարգիս,

Ստացած ենք 1964 Փետրուար 3 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Յունուար 26ին գիւմարուած
Տարեկան Միական ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտ-
րութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է թեմական
Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրութիւնը կա-
տարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները իբրեւ
անդամ Միական Խորհուրդի.

- Տիարք՝ Տօքթ. Պերճ Հայրապետեան
- Վարդան Ստամպուլեան
- Տիգրան Նաճարեան
- Յրէտ Կրաչեան
- Հէրրի Թէրզեան

Վերջինը փոխարինելու հրաժարեալ Տիար Յովհաննէս Ստամպուլեանի:

Կը յանձնարարենք որ Ձեր Միական Խորհուրդի նոր դիւանի անուն
-հասցէները Առաջնորդարան ղրկէք փութով:

Այսու օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն արդիւնաւոր գործունէութեան տարի
մը, իպապեառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն հա-
մայնցիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տէրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի